ԱԿՆՀԱՅՏ ԱՆՕԳՆԱԿԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Լալա Գրիգորյան
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ուսումնական ասիստենտ, ոստիկանության ավագ լեյտենանտ

Արդարության և պատասխանատվության անհատակացման սկզբունքի կենսագործման կարևոր նախադրյալներից է հանցագործությունների համար նախատեսվող պատժի համաչափ տարբերակումը՝ կախված արարքի հանրային վտանգավորության բնույթից և աստիճանից:

Սպանությունների համար քրեական պատասխանատվության տարբերակման իրավական գործիքակազմում իրենց նշանակությամբ առանձնանում են սպանության ծանրացնող հանգամանքները, որոնց առկայության հավաստումը կարող է հանգեցնել ՀՀ քրեական օրենսգրքով (այսուհետ՝ քր. օր.) նախատեսված ամենախիստ պատիժ՝ ցմահ ազատազրկում նշանակելուն:

Ի տարբերություն ՀՀ քր. օր.-ի՝ մի շարք արտասահմանյան երկրների (Բելառուս, Ռուսաստան, Վրաստան, Ալբանիայի, Ֆրանսիայի) քրեական օրենսդրությամբ որպես սպանության ծանրացնող հանգամանք նախատեսված է ակնհայտ անօգնական վիճակում գտնվող անձի սպանությունը[1]: ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասում նմանատիպ ծանրացնող հանգամանքի նախատեսման նպատակահարմարությունը պարզելու համար անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ քրեական իրավունքի գիտության մեջ սպանության՝ այդ ծանրացնող հանգամանքի բովանդակության բացահայտմանը:

Այսպես, Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքի 139 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես սպանության ծանրացուցիչ հանգամանք նախատեսված է սպանությունը մանկահասակի, զառամյալի կամ անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը: Ընդ որում՝ փոքրահասակ ասելով նկատի ունեն հանցանքի կատարման պահին 14 տարին չլրացած երեխաներին, իսկ զառամյալ համարվում է այն անձը, ում 70 տարին լրացել է հանցանքի կատարման պահին:

Ռուսաստանի Դաշնության քր. օր.-ի 105-րդ հոդվածի 2-րդ մասի «в» կետով պատասխանատվություն է սահմանված մանկահասակի կամ մեղավորի համար ակնհայտ անօգնական վիճակում գտնվող անձի սպանության, ինչպես նաև մարդուն առևանգելով զուգորդված սպանության համար: Պետք է նշել, որ հանցավորի համար ակնհայտ անօգնական վիճակում գտնվող անձի սպանությունը որպես ծանրացնող հանգամանք նախատեսելը 1960 թ. ՌԽՍՀՄ-ի քր. օր.-ի համեմատությամբ նորույթ է ՌԴ քր. օր.-ի համար, սակայն այն որպես ծանրացնող հանգամանք նախատեսելու հիմնավորումները միանշանակ չեն ընդունվում:

Գիտնականների մի մասը կարծում է, որ այս հանգամանքը առաջին հերթին վերաբերում է սպանության անմիջական օբյեկտին և հանցավորի անձին, չնայած չեն ժխտում նաև դրա կապը հանցագործության սուբյեկտիվ հատկանիշների հետ:

---

[1] Տե՛ս Сравнительное уголовное право. Особенная часть: Монография. Под общ. и науч. ред. **С. П. Щербы**. – М.: Издательство «Юрлитинформ», 2010, էջ 32:

Այսպես, Ե. Բ. Դորոնինան նշում է, որ անօգնական վիճակում գտնվող անձի սպանության առանձնահատկությունները պայմանավորված են տուժողի անօգնական վիճակով՝ նրա ֆիզիկական, հոգեկան կամ հոգեֆիզիոլոգիական հատկանիշներով [1]:

Վ. Բ. Խատուևը անօգնական վիճակում գտնվող տուժողին համարում է սոցիալապես անպաշտպան (կամ սոցիալապես թույլ պաշտպանված) և խոսում է պետության կողմից այս անձանց նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի մասին[2]:

Բացի այդ՝ այս հեղինակները հիմնվում են նաև հանցագործի անձի հատկանիշների վրա, նրանց դրսևորած վերաբերմունքը անպաշտպան վիճակում հայտնված անձանց նկատմամբ, ինչպես նաև այսպիսի հանցագործությունը վկայում է հանցագործի անձի բարձր վտանգավորության մասին: Ե. Բ. Դորոնինան մասնավորապես նշում է, որ անօգնական վիճակում գտնվող անձի սպանության հանրային վտանգավորության ավելի բարձր աստիճանը պայմանավորված է հանցագործի կողմից այն փաստի գիտակցմամբ, որ տուժողը չի կարող ինքնապաշտպանության համար միջոցներ ձեռնարկել: Այս հանցագործները բնութագրվում են այնպիսի բացասական հատկանիշներով, ինչպիսիք են դաժանությունը, ցինիզմը, սառնասրտությունը[3]: Վ. Բ. Խատուևը նշում է, որ սոցիալապես թույլ պաշտպանված անձանց սպանությունը, այդ թվում նաև անօգնական վիճակում գտնվողներինը, վկայում է հանցավորի անմարդկային հատկանիշներով, խորը բարոյազրկվածությամբ, ներքին չարությամբ օժտված լինելու մասին, ինչն էլ փաստում է հանցագործության բարձր հանրային վտանգավորությունը[4]:

Այլ հետազոտողներ էլ անօգնական վիճակում գտնվող անձի սպանությունն ուսումնասիրելիս շեշտը դնում են հանցագործի սուբյեկտիվ հատկանիշների վրա, որոնք բնութագրում են անձի հակասոցիալական էությունը: Օրինակ՝ Ն. Կ. Սեմերնովան նշում է, որ հանցագործի կողմից տուժողի անօգնական վիճակի օգտագործումը վկայում է հանցավորի դաժանության, բարոյականության տարրական նորմերի բացակայության մասին[5]:

Գիտնականների մի երրորդ խումբ (Ս. Վ. Բորոդին, Գ. Ն. Բորզենկով) էլ կարծում է, որ հանցավորի համար ակնհայտ անօգնական վիճակում գտնվող անձի սպանության բարձր հասարակական վտանգավորությունը պայմանավորված է ինչպես օբյեկտիվ հանգամանքներով՝ կապված գործունեության բնույթի հետ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով, որը վերաբերում է ոչ այնքան հանցավորի անձի բնութագրին, որքան սպանության դիտավորության ձևավորման առանձնահատկություններին:

Գ. Ն. Բորզենկովը, օրինակ, խնդրի լուծումը հետևյալ կերպ է տվել. «…եթե տուժողի անօգնական վիճակի օգտագործումը միշտ կարող է լինել առանձին դաժանության արտահայտում, ապա էլ ո՞րն է դրա բարձր վտանգավորությունը: Այդպիսի հանցանքն օբյեկտիվորեն ավելի վտանգավոր է, քանի որ հանցավոր արդյունքին հասնելը զգալիորեն հեշտանում է, երբ տուժողը քնած է, ուշաթափված է, հարբած է

---

[1] Տե՛ս **Доронина Е. Б.** Беспомощное состояние потерпевшего в структуре состава убийства: теория, закон, практика. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Екатеринбург, 2004, էջ 19:

[2] Տե՛ս **Хатуев В. Б.** Уголовно-правовая охрана беременных женщин, малолетних, беззащитных и беспомощных лиц и лиц, находящихся в зависимости от виновного. Автореф. дисс... канд. юрид. наук. М., 2004, էջեր 3-5, 17:

[3] Տե՛ս **Доронина Е. Б.,** նշվ. աշխ., էջեր 8, 20:

[4] Տե՛ս **Хатуев В. Б.** նշվ. աշխ., էջ 3:

[5] Տե՛ս Уголовное право. Особенная часть. Учебник для вузов /отв. ред. **И. Я. Козаченко, З. А. Незнамова, Г. П. Новоселов**. М., 1997, էջ 54:

կամ այլ պատճառով զրկված է գիտակցությունից: Այսպիսի հանցանքն առավել վտանգավոր է նաև սուբյեկտիվ կողմից, քանի որ այն փաստի գիտակցումը, որ տուժողը գտնվում է անօգնական վիճակում (օրենքը պատահական չի նշում ակնհայտության մասին) հեշտացնում է հանցավոր մտադրության ձևավորումը և կարող է խաղալ հրահրիչ դեր»[1]: Տ. Վ. Կոնդրաշովան մասնավորապես ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ 1960 թ.-ի ՌԽՍՀՄ-ի քր օր-ի գործողության ընթացքում անօգնական վիճակում գտնվող անձի սպանությունը որակվում էր որպես առանձին դաժանությամբ սպանություն, այն դեպքերում, երբ տուժողը գիտակցում էր, որ մոտակա ժամանակում ինքը զրկվելու է կյանքից, բայց չի կարող միջոցներ ձեռնարկել իր փրկության համար, ինչը նրա մոտ առաջացնում է հոգեկան լրացուցիչ տանջանքներ[2]: Նմանատիպ կարծիք է արտահայտել նաև Ս. Դեմենտևը: Նա գրում է. «Պատասխանատվություն սահմանելով հանցավորի համար ակնհայտ անօգնական վիճակում գտնվող անձի սպանության պատճառով՝ օրենսդիրը նկատի է ունեցել, որ այդ դեպքում տուժողին պատճառվում են լրացուցիչ, հատուկ տառապանքներ: Նա գիտակցում է, որ իրեն շուտով սպանելու են, բայց իր ֆիզիկական վիճակի պատճառով չի կարող ո՛չ դիմադրություն ցույց տալ, ո՛չ օգնություն կանչել: Այդ վիճակը պատկերացնում է նաև մարդասպանը. նշանակում է՝ նա գործում է ավելի ցինիկ և անպատկառ կերպով»[3]: Մ. Ն. Կապլինը ենթադրում է, որ ակնհայտ անօգնական վիճակում գտնվող անձի սպանությունը ամբողջությամբ կլանվում է առանձին դաժանությամբ սպանության հասկացության մեջ[4]: Այդպիսի կարծիքի են նաև մի շարք այլ գիտնականներ[5]:

Վերջապես չի կարելի չհիշատակել, որ առանձին հետազոտողներ կարծում են, որ տարբերակված պատասխանատվությունը սպանության համար այն հաշվարկով, որ դա անօգնական վիճակ է, ընդհանուր առմամբ սխալ մոտեցում է և չունի որևէ հիմնավորում: Ա. Ի. Ստրելինկովը գտնում է՝ անհիմն է սպանության այս տեսակի դասումը որակյալ հանգամանքների շարքը, քանի որ հանցավորի համար ակնհայտ անօգնական վիճակում գտնվող անձի սպանության դեպքում չի մեծանում օբյեկտի կյանքին պատճառված վնասը[6]:

Հետազոտվող հանցագործության հանրային վտանգավորության բարձրացման մասին այսքան կարծիքների բազմազանությունը վկայում է, որ օրենսդիրը քննարկվող որակյալ հատկանիշը սպանության հանցակազմի մեջ ներմուծելով ոչ այնքան հստակ էր պատկերացնում, որ հենց այդ հատկանիշը պետք է արտացոլի ոտնձգության օբյեկտի առանձնահատկությունները և տուժողի անձը, հանցագործի ան-

---

[1] **Бородин С. В.** Преступления против жизни. М., 1999. С. 101; Курс уголовного права. В 5 т. Учебник / под ред. **Г. Н. Борзенкова, В. С. Комиссарова**. Т. 3. Особенная часть. М., 2002, էջ 115:

[2] Տե՛ս **Кондрашова Т. В.** Проблемы уголовной ответственности за преступления против жизни, здоровья, половой свободы и половой неприкосновенности. Екатеринбург, 2000, էջեր 67-68:

[3] **Дементьев С.** Понятие беспомощного и бессознательного состояния//Российская юстиция. 1999. № 1, էջ 43:

[4] Տե՛ս **Каплин М. Н.** Дифференциация уголовной ответственности за преступления против жизни и здоровья. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Екатеринбург, 2003, էջ 17:

[5] Տե՛ս, օրինակ՝ **Нгуен Жа Ха**. Ответственность за убийство по Уголовным кодексам Российской Федерации и Социалистической Республики Вьетнам. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Краснодар, 1999, էջեր 15-17:

[6] Տե՛ս **Стрельников А. И.** Ответственность за убийство, совершенное при обстоятельствах, отягчающих наказание. Автореф. дисс. ... канд. юрид. наук. М., 1998, էջ 16:

ձի առանձնահատուկ հատկանիշները, տուժողին հատուկ հոգեկան տառապանքներ պատճառելու փաստը կամ այլ հանգամանքեր, որոնք վկայում են այսպիսի հանցանքների հանրային վտանգավորության մասին: Վ. Բ. Խատունը, բացի անօգնական վիճակում գտնվող անձի սպանությունից, որպես ծանրացնող հանգամանք առաջարկում էր ավելացնել նաև փոքրահասակների և ծերերի սպանությունը: Այս առաջարկը հիմնվում է գիտնականների այն տեսակետի վրա, որ պետք է քրեաիրավական պաշտպանության տակ վերցնել հասարակության սոցիալապես անպաշտպան կամ սոցիալապես թույլ պաշտպանված շերտերին: Նշելով, որ փոքրահասակությունը և ծերությունը ոչ միշտ են վկայում անօգնական վիճակի մասին (փոքրահասակ է համարում մինչև 14 տարեկանը, իսկ ծերերին՝ ծերության թոշակի տարիքը), Վ. Բ. Խատունը այնուամենայնիվ գտնում էր, որ այս կատեգորիային պատկանող անձանց սպանությունը, անկախ դիմադրություն ցույց տալու նրանց ունակությունից, միշտ պետք է որակվի որպես ծանրացուցիչ հանգամանք, և ավելի խիստ պատասխանատվություն նշանակվի[1]:

Ակնհայտությունը որպես սուբյեկտիվ հատկանիշ որակելը նշանակում է, որ հանցագործը ոչ միայն գիտակցում է, այլև գիտի, որ ա) տուժողը գտնվում է անօգնական վիճակում և բ) այդպիսի վիճակը հեշտացնում է հանցագործությունը: Ռուսական դատական պրակտիկայում անօգնական վիճակ չեն դիտվում ալկոհոլային հարբածությունը և քնած ժամանակ մարդուն սպանելը, քանի որ օրենքի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ անօգնական վիճակում գտնվող անձինք են համարվում փոքրահասակները, ծերերը, ծանր հիվանդները, այնպիսի հոգեկան խանգարումներով տառապող անձինք, ովքեր ի վիճակի չեն գիտակցելու իրենց նկատմամբ կատարածը և վերարտադրել իրականությունը[2]:

Ամփոփելով կատարված ուսումնասիրության արդյունքները՝ կարծում ենք, որ հանցավորի համար ակնհայտ անօգնական վիճակում գտնվող անձի սպանությունը որպես սպանության ծանրացուցիչ հանգամանք նպատակահարմար է նախատեսել նաև ՀՀ քր. օր.-ով:

Դա հիմնավորվում է հետևյալ հանգամանքներով: Անօգնական վիճակում գտնվող են համարվում ծանր հիվանդները (այդ թվում՝ հետվիրահատական շրջանում գտնվող), հաշմանդամները, զառամյալները, մանկահասակները: Անօգնական վիճակում գտնվող տուժողները իրենց ֆիզիկական կամ հոգեկան վիճակի պատճառով չեն կարողանում պաշտպանել իրենց, ակտիվ դիմադրություն ցույց տալ մարդասպանին, ինչն էլ գիտակցում է հանցագործը: Արդյունքում հանցագործության կատարումը հեշտանում է, վնաս պատճառելու հնարավորությունը՝ մեծանում:

Ճիշտ է, գործող քրեական օրենսգրքի 63 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը որպես պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք նախատեսում է հանցանքը հանցավորի համար ակնհայտ հղի կնոջ, ինչպես նաև մանկահասակի, այլ անպաշտպան կամ անօգնական կամ հանցավորից կախյալ վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը, սակայն քանի դեռ անօգնական վիճակում գտնվող անձի սպանությունը ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասով նախատեսված չէ որպես սպանության ծանրացուցիչ հանգամանք, ապա այդպիսի սպանությունը (այլ ծանրացուցիչ հանգամանքների բացակայության դեպքում) պետք է որակվի 104 հոդվածի 1-ին մասով, և դատարանը պետք է պատիժ նշանակի 104 հոդվածի 1-ին մասի սանկցիայի սահմաններում՝ ազատազրկում 8-15 տարի ժամկետով, իսկ

---

[1] Տե՛ս **Хатуев В. Б.**, նշվ. աշխ., էջեր 14-16:

[2] Տե՛ս Судебная практика по уголовным делам /сост. **Г. А. Есаков**. – М., Изд-во «Проспект», 2007, էջ 387:

տուժողի անօգնական լինելը կարող է հաշվի առնվել ընդամենը որպես պատիժը ծանրացնող հանգամանք: Սակայն գտնում ենք, որ անօգնական վիճակում գտնվող անձի սպանությունը ունի հանրային վտանգավորության ավելի բարձր աստիճան, քան հասարակ, օրինակ, խանդի շարժառիթով կատարված սպանությունը, ուստի հասարակ սպանության համար նախատեսված սանկցիան, կարծում ենք, համաչափ չէ անօգնական վիճակում գտնվող անձի սպանության վտանգավորությանը:

Այն հանգամանքը, որ ՀՀ քր. օր.-ի 104 հոդվածի 2-րդ մասում անօգնական վիճակում գտնվող անձի սպանությունը որպես ծանրացուցիչ հանգամանք նախատեսված չէ, չի կարող «փոխհատուցվել» այն բանով, որ այդ արարքները որակվեն որպես առանձին դաժանությամբ սպանություն, քանի որ հանցավորի համար ակնհայտ անօգնական վիճակում գտնվող անձի սպանությունը ոչ միշտ է, որ կարող է վկայել մարդասպանի և նրա արարքի առանձին դաժանության մասին և որակվել որպես առանձին դաժանությամբ սպանություն: Կարծում ենք, որ ակնհայտ անօգնական վիճակում գտնվող անձի սպանությունը անհրաժեշտ է նախատեսել որպես սպանության ծանրացուցիչ հանգամանք:

Ուստի առաջարկում ենք ՀՀ քր.օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասում որպես ծանրացնող հանգամանք նախատեսել նաև ակնհայտ անօգնական վիճակում գտնվող անձի սպանությունը:

УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА УБИЙСТВА ЛИЦА, ЗАВЕДОМО ДЛЯ ВИНОВНОГО НАХОДЯЩЕГОСЯ В БЕСПОМОЩНОМ СОСТОЯНИИ

Лала Григорян

Учебный асистент кафедры уголовного права и криминологии юридического факультета академии Образовательного комплекса полиции Республики Армения, старший лейтенант полиции

В системе правовых средств дифференциации уголовной ответственности за убийства своей важностью выделяются отягчающие обстоятельства, установление которых может привести к назначению самого строгого наказания, предусмотренного Уголовным кодексом–пожизненного наказания.

Статья посвящена некоторым вопросам уголовной ответственности за убийство лица, заведомо для виновного находящегося в беспомощном состаянии. Автором представлены высказанные в теории уголовного права разные мнения о необходимости закрепления данного отягчающего обстоятельства в Особенной части Уголовного кодекса. В статье автором изложены обоснованные аргументы о закреплении данного отягчающего обстоятельства в Уголовном кодексе Республики Армения.

CRIMINAL-LEGAL CHARACTERISTICS OF MURDER OF PERSON BEING IN OBVIOUS HELPLESS STATE

Lala Grigoryan
Training Assistant of the Criminal Law and Criminology Chair of the Law Department of the Academy of the Educational Complex of the Police of the Republic of Armenia, the Police Senior Lieutenant

The aggravating circumstances of the crime are separated by their significance for murders in the legal tools of criminal responsibility distinction. The assurance of the presence of these circumstances can bring to the strictest punishment foreseen by the RA Criminal Code, i.e. life imprisonment.

The article is related to some issues of criminal responsibility for the murder of a person being in a helpless state. Different opinions available in the theory about the presence of the necessity of aggravating circumstance of the murder have been presented. In the article the author brought substantiated facts for foreseeing the abovementioned aggravating circumstance by the RA Criminal Code.

Բանալի բառեր - *քրեական օրենսգիրք, սպանություն, ծանրացնող հանգամանք, քրեական պատասխանատվության տարբերակում, անօգնական վիճակ, ակնհայտություն, առանձին դաժանություն:*
Ключевые слова: *Уголовный кодекс, убийство, отягчающие обстоятельства, дифференциация уголовной ответственности, безпомощное состояние, заведомость, особая жестокость.*
Key words: *Criminal Code,murder, aggravatingcircumstance, criminal responsibility distinction, helpless state, obviousness, separate cruelty.*